

ԽՈՒՍԱՓՄԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՂՆԻԶՎԱԾՅԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ռ. Ա. ՆԱԿԱՊԵՏՅԱՆ

Հայոց ավանդությանը ընտանեկան-հասարակական կենցաղին ուղեկցող երևույթներից էր խուսափման սովորույթը, որը դրսևորվում էր մեծերի նկատմամբ հատկապես երիտասարդ կնոջ (հարսի) չխոսկանության, բերանկապության, որոշ անհրաժեշտ և անհրաժեշտության, կանանց սեռի առավել հնազանդության, տղամարդկանցից խույս տալու և այլ սովորույթների առկայությամբ: Ամուսնաընտանեկան սահմանափակումներն ու արգելանքները ներընտանեկան կյանքի մի ուրույն ոլորտ են կազմել: Հետազոտողներն ուշադրություն են դարձրել առավելապես վարքի հատուկ կանոնների, ընտանեկան կենցաղի որոշ ներքին գծերի, ընտանիքի տարբեր անդամների միջև վարվելակարգի ուսումնասիրությանը: Այս առումով առանձնապես արդիական են կնոջ, նրա դերի ու կարգավիճակի հետ կապված բազմաթիվ հարցեր, որոնց ճիշտ լուծում, ինչպես նաև օբյեկտիվ գնահատականներ տալու համար դրանք անհրաժեշտ է դիտարկել հայ կնոջ ունեցած դերի ու կարգավիճակի համատեքստում: Հողվածում փորձ է արվում հիմնականում մեր իսկ կողմից գրի առնված դաշտային ազգագրական նյութերի հիմամբ ներկայացնելու ընտանեկան արգելքների, խուսափումների, չխոսկանության այն համակարգը, որը պարտադիր ուղեկցվել է հայոց ավանդական ընտանեկան կենցաղին: Փորձ է արվում համակարգել խուսափման ավանդույթն ու արգելքները. ամուսինների, կնոջ և ամուսնու հարազատների, ամուսնու և կնոջ հարազատների և ծնողների ու զավակների, տարեց և կրտսեր անդամների միջև:

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իրեն բնորոշ հոգեկերտվածք և մտածելակերպ: Ընդհանուր առմամբ, աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների մեջ տղամարդիկ ավելի անկախ են եղել, ինքնավստահ, համարձակ, միևնույն կինը՝ համեմատաբար հնազանդ, կախյալ, հանդուրժող, հարմարվող, որոնք մեր ժողովրդի կենսակերպի առավել ցայտուն պահպանված սովորույթներից են և փոխանցվել են սերնդեսերունդ:

XIX դ. վերջին – XX դ. սկզբներին աղձնիքահայ ընտանիքում տիրող ներքին կյանքը, վարքն ու բարքը դեռևս խարսխվում էին դարերի խորքից եկող նահապետական ավանդույթների վրա, որոնք էլ պայմանավորում էին ընտանիքի յուրաքանչյուր անդամի տեղն ու դերը ներընտանեկան կյանքում:

Նահապետական ընտանիքի (գերդաստան) ներքին աշխատանքների սեռատարիքային բաժանումը սովորությանին իրավունքի չափանիշներով մեծապես նպաստում էր տվյալ ընտանեկան կառույցի հարատևմանը որոշակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պայմաններում՝ հայտնի չափով ապահովելով գերդաստանի անդամների համերաշխ գոյակցությունը ինչպես միմյանց, այնպես էլ գյուղական համայնքի հետ հարաբերվելիս: Հատկապես կարևորվում էր գերդաստանի նահապետի և նրա կնոջ դերը, որոնք, առաջնորդվելով նշված չափանիշներով, կարողանում էին հաստատուն ու կայուն պահել հասարակության հիմքը հանդիսացող ընտանիքի նշված տիպը:

Հայ ժողովրդի սովորությանին համակարգում կին թե տղամարդ դաստիարակվում էին իրենց դերին ծառայելուն: Հայ կինը սահմանափակված է եղել ազգային ավանդույթների նահապետականության կաղապարներով՝ հնազանդության, հավատարմության, տնային աշխատանքներից նվիրվելու պատրաստականությամբ, մշտապես հարմարվել է

իր և ամուսնու ծնողների մշակութային միջավայրին, սեռային խտրական փոխադարձ-
րություններին: Կնոջ և տղամարդու միջև խտրականությունը դրվել է հենց նրանց ծնվելու
պահից. տղա երեխայի ծնունդը՝ որպես սերնդաշարունակման, աշխատուժով ապահովե-
լու, ընտանիքի և հայրենիքի պաշտպան ունենալու հանգամանք, ուղեկցվել է համընդհա-
նոր շնորհավորանքներով: Միևնույն ժամանակ ըստ էության դժբախտություն է հա-
մարվել, քանզի նրա պատճառով ընտանիքը ծախսեր էր կրում՝ օժիտ պատրաստելով,
իսկ ամուսնությունից հետո ծառայելու էր օտար ընտանիքի:

Ընտանեկան վարվելակարգի հարցերին մենք անդրադարձել ենք առանձին՝

Աղջիկները մինչև ամուսնությունը, կանանց համեմատ, որոշ ազատություն են ունե-
ցել, բայց պատանհանների համեմատ՝ ճնշված էին: Աղջիկն իրավունք չուներ մասնակցելու
պատանեկան խաղերին և հասարակության մեջ զուսպ ու ամոթխած էր. «Աղջիկ ասածդ
լեզու ունենում է, խոսել չի իմանում»: Աղջկա անադարտությունն ու համեստությունը եղել
է իր ընտանիքի, անգամ ազգատոհմի պատիվն ու սրբությունը, հակառակ պարագայում
համայնքի կողմից կորակեին նրան անարգված անուսուցելով:

Ամուսնության գործարքի ամենասկզբնական փուլից՝ աղջիկտեսից սկսած, մանկա-
մարդ աղջկա վարքագիծը կտրուկ կերպով փոխվել է: Նրան այլևս արգելվել է խաղալ
տարեկիցների հետ, հանախակի երևալ հասարակության մեջ: Նշանած աղջիկն օրվա
մեծ մասն անց էր կացնում կանանց և իր դիրքի աղջիկների ու հարսների շրջապատում:
Նշանդրեքի ողջ ծիսակարգի ընթացքում աղջիկը մարդկանց մեջ էր դուրս գալիս տարեց
անձանց ցանկությամբ ու պահանջով միայն և այդ դեպքում էլ ներկայանում էր հուշիկ ու
անձայն՝ ջանալով ըստ ամենայնի պարկեշտ, հեզ ու խոնարհ երևալ ապագա ամուսնուն
ու նրա հարազատներին: Հարսի կողմից անհանդուրժելի արարք էր համարվում նստել ա-
վագների ներկայությամբ, մնալ տղամարդկանց ու տարեց կանանց շրջապատում, նայել
նրանց դեմքին, կերակրել երեխային ուրիշների ներկայությամբ ու առանց սկեսորոջ հրա-
մանի և այլն՝:

Հայրիրավական հասարակությունը ձևավորում է տարբեր կենցաղային սովորույթ-
ներ, որոնք հանդես են գալիս որպես կնոջ նկատմամբ սոցիալական վերահսկողության
միջոցներ: Դրանցից են նաև հագուստի մեջ կիրառվող արգելքները: Կնոջ հագուստում
ամրագրված արգելքները միտված էին ընդօժելու նրա հնազանդությունը, քողարկել-
ծածկելու կանացիությունը, բարեմասնությունները, մարմնի՝ աչքի ընկնող հատվածները՝
նրան դարձնելով նվազ գրավիչ: Աղձնիքահայ կնոջ հագուստի և արտաքին հարդարան-
քի հանդես պայմանի սահմանափակումներ էին կիրառվում, որոնք կապված էին տարի-
քային տարբերությունների և սոցիալական մի խմբից ու կարգավիճակից մյուսին անցնե-
լու հետ: Հագուստի և արտաքին հարդարանքի հարցում արգելքներ կիրառվում էին նո-
րահարսի, մասամբ նաև՝ տարեց կանանց նկատմամբ: Տարիքային բոլոր խմբերին բնո-
րոշ էր այն, որ նրանք հագնում էին երկար թևքերով, կրծքամասը փակ, մինչև կրունկները
հասնող զգեստ: Կնոջ թևքերը, ոտքերը, լանջը չպետք է երևային: Հագուստի մեջ կարելի է
առանձնացնել նաև այրի կնոջ հագուկապը, որն աչքի էր ընկնում մուգ գույներով և զար-
դերից զուրկ լինելով:

Տարագի մեջ կնոջ նկատմամբ կիրառվող արգելքներն ավելի ցայտուն են արտա-
հայտված գլխի հարդարանքում: Հարսնացուն, մտնելով ամուսնական տարիքային խմբի
մեջ, կրում էր գլխի բարդ հարդարանքներ, որոնցով կապվում էին քիթն ու բերանը, օրի-
նակաճանցնում էին շխտկանության հնամենի սովորույթները: Բոլոր ամուսնացած կա-
նայք, տարիքից անկախ, իրավունք չունեին բաց գլխով ման գալու: Կնոջ գլուխը բաց տես-
նելն ամոթ էր համարվում և անգամ դատապարտվում էր հասարակության կողմից:

Եթե մինչև հարսանիքը հարսնացուն մարդկանց երևում էր բաց երեսով, և դեմքը

¹ Տե՛ս Ռ. Նահապետյան, Աղձնիքահայերի ներընտանեկան ավանդական փոխադարձ-
ությունների և վարվելակարգի մի քանի հարցեր (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ), «Հանքեր Երևա-
նի համալսարանի», 1986, թիվ 1, էջ 61:

² ԴԱՆ, տ. 2, էջ 206, տ. 9, էջ 40-41:

թաքցնելու միակ միջոցը գլուխը խոնարհելն էր, ապա հարսանիքի առթիվ զգեստավորվելու պահից՝ նրա դեմքը ծածկվում էր քողով³։ Աղձնիքի տարբեր շրջաններում ամուսնական քողը կրելու ժամկետը տատանվում էր 15 օրից 7 տարվա միջև։ Լեոնայից Գալիոկ և այլ գյուղերում հարսի քողը հանվում էր սկեսրոջ ձեռքով հայրական տուն *դարձ* գնալ-վերադառնալուց հետո և խորհրդանշում էր նրա՝ ընտանիքի լիարժեք անդամ դառնալու հանգամանքը։ Սակայն քողը վերցնելուց հետո, ինչպես և գերդաստանի մյուս կանայք, նորահարսը ևս հատուկ եղանակով փաթաթում ու ծածկում էր գլուխն ու դեմքը՝ տեսանելի դարձնելով միայն աչքերն ու քիթը։ Տավորիկում քողը հանվում էր հարսանիքից 15 օր անց, նույնպես դարձից հետո քավորկնոջ ձեռքով։ Քողը փոխարինվում էր մինչև քիթն ու բերանը հասնող թափանցիկ շղարշով, իսկ դեմքն ու գլուխը ծածկելու վերոհիշյալ ձևը պահպանվում էր մինչև 2-3 երեխա ունենալը⁴։ Հովտային ուրիշ շրջաններում հարսի քողն իջնում էր մինչև կուրծքը։ *Պսակից երեք օր անց՝ առագաստից հետո, այն քավորի ձեռքով՝ սանամոր աչքը բանալու՝ համար կարճացվում էր, բայց այնքան, որպեսզի ծածկեր միայն դեմքը, և այդպես մնում էր մինչև յոթ տարի*⁵։ Քողի առկայությունը երբեմն հնարավորություն էր տալիս կնոջը դեմքով ճանաչելու։ Հայտնի են դեպքեր, երբ երկու տարվա հարսը երանի է տվել, որ տղամարդկանց խմբի մեջ ճանաչի իր ամուսնուն։ Երեսը վարագուրող ամուսնական քողը հարսն իր ձեռքով բարձրացնում ու բացում էր միայն երեխաների ներկայությամբ՝ խոսելիս կամ ուտելիս։ Նա իր դեմքը ցույց չէր տալիս տան մեծին, տանտիկնոջը, իրենից տարիքով մեծ բոլոր տեգրերին ու ավագ տեգրկնոջը, օտարական տղամարդ ու կին հյուրերին, համագյուղացիներին⁶։ Ամոթալի ու անպատվաբեր էր համարվում հարսին հերարձակ, ինչպես նաև ոտնաթաթն ու կրունկը բաց տեսնելը։ Հարսի դեմքը բացելու արարողությունը հայտնի էր «երեստեսնուկ» անվանմամբ։ Երիտասարդ աղջիկներին և կանանց ընդհանրապես արգելվում էր կտրել մազերը, ներկել աչքերը, միայն ձեռքերն էին հինա դնում, որը կանանց մարմնի խմամբի միակ թույլատրելի և ընդունելի ձևն էր։ Երիտասարդ հարսներն իրավունք չուներին մազերը սանրել ավագ տարիքի մարդկանց ներկայությամբ⁷։ Եթե հարսը սանրվելիս լիներ, և սկեսուրը ներս մտներ, ապա պարտավոր էր անմիջապես ծածկել գլուխը։ Փաստորեն հայոց մեջ ընդունված բարոյաիրավական օրենքներն իրենց դրոշմն են թողել ոչ միայն ընտանեկան – հասարակական հարաբերությունների, կնոջ վարվեցողության կանոնների, այլև հագուկապի, արդու-գարդի վրա։

Գլխաշորի տակից բոլոր կանայք կոպի⁸ (քոբի) էին կրում, որի հիմնական մասը ճակատակապն էր՝ կապույտ ուլունքներով, արծաթե ճակատագարդեղով, մեծ ու փոքր կիսալուսնաձև կենտրոնական զարդով։ Քունքերը զարդարում էին եռանկյունաձև ակներեն կախիկներով։ Ի տարբերություն տարեց կանանց՝ երիտասարդներինը ասեղնագործված էր արգասավորությունը խորհրդանշող զարդանախշերով, որոնցով խորհրդանշվում էին նաև սեռատարիքային անցման, ամուսնության և պտղաբերության հետ կապված սովորությունները, սոցիալական վիճակը, գեղագիտական ճաշակը։

Աղձնիքահայ կնոջ գլխի հարդարանքում ուշադրության է արժանի նաև բերանկապի սովորությունը, քանի որ, ըստ ընդունված բարոյականության չափանիշների, ամուսնանալուց հետո կնոջ բերանը չպետք է երևար։ Գլխի հարդարանք կրելը որոշակի սոցիալական

³ ԴԱՆ, տ. 4, էջ 110-111: Քողն Աղձնիքում հայտնի էր *քողը, քողկան, շարշոր, յազմա* անվանումներով։

⁴ ԴԱՆ, տ. 3, էջ 51-52, 59, տ. 9, էջ 129-130, տ. 13, էջ 37:

⁵ ԴԱՆ, տ. 9, էջ 40-41: 2-3 երեխա ունենալուց հետո «մեկ տակ» շղարշը կվերցնեն և «երկու տակ» կանեն («Բիւրակն», 1897, թիւ 4, էջ 140):

⁶ ԴԱՆ, տ. 4, էջ 38-39, տ. 8, էջ 88, տ. 9, էջ 40-41:

⁷ Հմմտ Հ. Թումանյան, Անիծած հարսը, Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, Բ. 2, Եր., 1990, էջ 107-109:

⁸ Կոպի կամ քոբի - գլանաձև գլխարկ, որը ծածկվում էր եռանկյունաձև գլխաշորով՝ հարդարված կենաց ծառի, երկրաչափական ու կենդանական ասեղնագործ պատկերներով։ Կանանց գլխի հարդարանքին մեծ նշանակություն է տրվել, համարվել է տան բարեկեցության գրավական։

կարգավիճակի՝ ամուսնացած լինելու նշան էր: Քողի կիրառությունը կապված է կնոջ ներփակ կյանքի ու չխոսկանության հետ: Թերևս դա կապված է նաև սեռական արգելքի, կնոջ ոչ լիարժեքության և անմաքուր լինելու նախապաշարման հետ: Գ. Սրվանձտյանցի հավաստմամբ, Տիգրանակերտում (նկատի ունի Դիարբեքիրը - Ռ. Ն.) հայ կանայք և աղջիկները փողոց դուրս գալիս ծածկվում էին սպիտակ կամ կապույտ ծածկոցներով՝ սավաններով, մինչդեռ գյուղերում դրա կարիքը չէր զգացվում, քանի որ այնտեղ միայն հայերով են շրջապատված եղել: Քողերի և թուրքերի բռնություններից խույս տալու նպատակով քաղաքում հայ կինը չէր կարող դուրս գալ առանց ուղեկցության կամ առանց ծածկվելու: Ինչպես մահմեդականների շրջապատում, հայոց մեջ էլ կնոջ՝ ամուսնու հետ հասարակության մեջ դուրս գալը բացառված էր:

Առավել խիստ էին հարսի խուսափումներն ու արգելքներն ամուսնու ծնողների և մերձավորների նկատմամբ: Հարսը խույս էր տալիս տան ավագ տղամարդկանց, հատկապես սկեսրայրի հետ հանդիպելուց: Նստելիս պետք է ծածկեր սրունքները, դեմքը քողարկեր գլխաշորով, մեջքով չնստեր մարդկանց ուղղությամբ: Մեծերի, հատկապես սկեսրայրի ներս մտնելիս հարսն արագ պետք է ոտքի կանգներ, գլուխը խոնարհեր, ձեռքերը պահեր գոգնոցի տակ կամ արագ հեռանար: Նա իրավունք չուներ մտնելու նրա հարկաբաժինը, նայելու նրա երեսին, իսկ հարցերին պատասխանում էր գլխի շարժումով: Նա օրվա մեծ մասն անց էր կացնում իր անկյունում, պարտավոր էր ամբողջ ժամանակ լռել, տանից կարող էր դուրս գալ օրվա մեջ երկու անգամ՝ աղջիկների ուղեկցությամբ, իսկ նորահարսը մինչև 2-3 երեխա ունենալը տնից դուրս գալու իրավունք չուներ: Նա պարտավոր էր արթնանալ բոլորից շուտ և քնել բոլորից ուշ, ամեն երեկո և առավոտ մաքրել տղամարդկանց զգեստներն ու ագանելիքները: Առհասարակ կինը, նրա հագուստն ու վարքը շարունակաբար գտնվել են հանրույթի հսկողության ներքո, որպեսզի չլիներ դուրս իսկ շեղում սովորությանից ընդունված նորմերից:

Հատկապես լայն տարածում ուներ հարսի շխոսկանությունը: Այն համարվում էր հարգալից վերաբերմունք բոլոր նրանց հանդեպ, ում հետ նա չէր խոսում: Չխոսկանությունը համեմատվում էր խուփով պոտոուկի հետ. եթե խուփը պահպանում է կերակրի համն ու բուրմունքը, չխոսկանությունն էլ՝ հարսի անմեղությունն ու համեստությունը: Չխոսկանությունը ընտանիքի տարբեր անդամների հետ տարբեր ժամանակային սահմանափակումներ էր ընդգրկում: Հարսն ամենից երկար չխոսկան էր մնում սկեսրայրի և քավորի հետ. այն տևում էր մինչև 3-4 երեխա ունենալը, իսկ երբեմն էլ՝ մինչև մահ: Խուսափումն առավել թույլ էր արտահայտվում հարսի ու ավագ տեգրերի միջև և էլ ավելի թույլ՝ հարսի և սկեսրոջ միջև՝ կապված տնտեսության համատեղ վարման հետ: Այս դեպքում էլ արգելքների վերացումը կատարվում էր սկեսրոջ առաջարկությամբ: Տեգրերի հետ չէր խոսում մինչև 2-3 երեխա ունենալը¹¹: Սկեսրոջ հետ համեմատաբար շուտ էր խոսում սովորաբար առաջին երեխան ունենալուց հետո, բայց հուշիկ և գլուխը խոնարհած: Բացարձակ չխոսկանության փուլում նա ընտանիքի անդամների հետ հաղորդակցվում էր ժեստերի լեզվով կամ դեռահաս երեխաների միջոցով: Երբ չխոսկանություն պահպանող հարսը ցանկանում էր ինչ-որ բան հաղորդել, ապա տվյալ անձի ներկայությամբ դիմում էր իր երեխային կամ երեսը շրջելով դեպի պատը՝ լսելի ձայնով հաղորդում էր ասելիքը: Այսինքն՝ ձևավորվել էր հաղորդակցության մի համակարգ, որը զուգահեռներ ուներ նաև կովկասյան սովորույթներում¹²: Չխոսկանությանը սովորաբար վերջ էր տրվում, երբ հարսն

¹¹ Տե՛ս Գ. Սրվանձտյանց, Թորոս Աղբար, Երկեր, հ. 2, Եր., 1982, էջ 430: Նույնը հավաստում է Ե. Լալայանը (տե՛ս Ե. Լալայան, Վասպուրականի ազգագրությունը, «Ազգագրական հանդես», Գ. XX, Թիֆլիս, 1910, № 2, էջ 136-137):

¹² Ուշագրավ է, որ, ըստ մեր գրառած նյութերի, հարսի նկատմամբ որոշակի արգելքներ ուներ և սկեսրայրը: Նա խուսափում էր ուշադիր նայել հարսի դեմքին, բռնել նրա ձեռքը, չպետք է հագուստափոխվեր հարսի ներկայությամբ, մատեր այնտեղ, որտեղ հարսի անկողինն էր գտնվում (ՌԱՆ, տ. 8, էջ 88-89, տ. 9, էջ 40-41):

¹³ ՌԱՆ, տ. 1, էջ 14, 84, տ. 2, էջ 207, տ. 4, էջ 14-15, 35, 40:

¹⁴ Տե՛ս Ե. X. Бражников, Очерки этнографии общения адыгов. Мальчик, 1983, էջ 156-214:

արդեն բազմազավակ մայր էր ու հասուն որդիների տեր: Խոսելու առաջարկով դիմում էր տան ավագը՝ խոստանալով նրան որևէ նվեր կամ ասելով. «Այս տանն ամեն ինչ ջոճն է, խոսի՛ր»¹³: Սակայն խոսելու վերաբերյալ պաշտոնական թույլտվություն ստանալուց հետո էլ կանայք երկար ժամանակ ցածրախոս էին լինում և խուսափում էին անմիջական հարդրակցումից: Իր հերթին փեսան ևս որոշ ժամանակ խուսափում է կնոջ ավագ ազգականներից, հատկապես նրա ծնողներից: Այս դեպքում էլ արգելքները վերացվում էին միայն այդ մասին հստակ առաջարկություններից հետո: Հայաստանի գրեթե բոլոր պատմագագարական շրջաններում այդ արգելքները եղել են ընդհանուր, տարբերվել են միայն խուսափման ժամկետները: Հիսուկանության տևողությունը կախված էր տարբեր շրջանների սոցիալ-քաղաքական, տնտեսամշակութային իրավիճակից, ազգային ավանդույթների պահպանվածության աստիճանից:

Հիսուկանությունը՝ որպես ընտանեկան հնավանդ սովորույթ, մեզ է հասել հայրիրավական ընտանիքի ձևավորման շրջանից՝ երկու սեռերի փոխհարաբերությունները կարգավորելու միտմամբ: Կինը հազարամյակների ընթացքում հարկադրաբար ձեռք էր բերել խուսափելուն նպաստող մի շարք հարակից ձևեր: Այդպիսիք էին՝ բարդ գլխակապերը, դիմակավորման հասնող թթկալակապությունը, քողավորումը, թանձր ու երկար զգեստներով իր մարմնական բարեմասնությունները քողարկելը և այլն: Ուստի չիսուկանությունը պայմանավորված էր ընդունված վարվելակերպով, սոցիալական մի խմբից մյուսին անցնելով և ժամանակի իրավաբարոյական նորմերով: Հիսուկանությունը ազգագրության մեջ վաղուց քննվող, բայց տակավին չպարզաբանված «խուսափման սովորույթի» («обычай избегания») խնդիրն է¹⁴: Խուսափման այս սովորույթը, ըստ էության, պայմանավորված չէր միայն դավանանքով, այլ նաև որոշակի հասարակական պայմանների արգասիք էր: Սովորույթի ծագման, մեկնաբանման, դասակարգման շուրջ գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Գիտնականներից ոմանք այն կապում են՝ ա) կնոջ առևանգման ինստիտուտի հետ՝ իբրև բռնի ամուսնության դեմ ձևավորված ռեակցիա, բ) որպես արգելափող համակարգ, սեռային կապերի կանխման միջոց, որը ծագել է խմբային ամուսնությունից անհատականի անցման ընթացքում, գ) որպես մայրիշխանությունից հայրիշխանության անցման ժամանակաշրջանի մնացուկ, դ) տիրապետող բազմաթիվ մնացուկների հոգեբանական ընթրոնում¹⁵: Որոշ հեղինակներ էլ այս սովորույթը կապում են կնոջ անհավասար դրության հետ¹⁶: Մեր ձեռքի տակ եղած դաշտային ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ սրանցից առավել հավանականը է. Թեյլորի առաջ քաշած վարկածն է, ըստ որի՝ խուսափումը և արգելքները մայրիշխանությունից հայրիշխանության անցման դարաշրջանի վերապրուկ է, քանզի սրանով են բացատրվում խուսափումը

¹³ ԴԱՆ, տ. 1, էջ 14, 84, տ. 3, էջ 51-52, տ. 8, էջ 88, տ. 9, էջ 41:

¹⁴ Սովորույթների այդ համակարգն այնպիսի մեծ հետաքրքրություն էր հարուցել ուսումնասիրողների շրջանում, որ քննարկման ու բանավեճի նյութ դարձավ: Հայտնի է, որ «избегание» հասկացությունն առաջադրել և գիտական շրջանառության մեջ է մտցրել է. Թեյլորը: St'u Э. Тойлор, О методе исследования развития учреждений.- «Этнографическое обозрение», V, 1890, էջ 3-5, И. В. Винников, К вопросу о возникновении института избегания.- Сборник этнографических материалов, Ленинград, 1927, № 2, էջ 35-42, Б. Х. Бражников, Коммуникативное поведение и культура (к определению предмета этнографии общения).- «Советская этнография», 1978, № 5, էջ 3-17, Նույնի՝ Очерки этнографии общения адыгов. Нальчик, 1983, 156-214, Я. С. Смирнова, А. И. Першиц. Избегание: формационная оценка или «этический нейтралитет». - «Советская этнография», 1978, № 6, էջ 61, СЭ-ի 1979 թ. թիվ 1-ում բանավեճին մասնակցեցին նաև Ս. Ա. Հարությունովը (Анализ и оценка избегания), Բ. Խ. Բազմունկովը (О значении этической позиции ученого в этнографическом исследовании), Գ. Ե. Մարկովը (Обычай избегания и проблема «перешитков»), Ս. Ա. Տոկարևը («Избегание» и «Этикет», «Этикет народов Передней Азии», М., 1987 և այլն):

¹⁵ St'u Я. Смирнова, А. Першиц, Избегание: формационная оценка или «этический нейтралитет», էջ 63, Г. Марков, Обычай избегания и проблема «перешитков».- «Советская этнография», 1979, № 1, էջ 66-67:

¹⁶ St'u Я. Смирнова, А. Першиц, նշվ. աշխ., էջ 64:

և արգելքները ոչ միայն ամուսինների և նրանց տարեց հարազատների միջև, այլև ամուսինների միջև՝ տարեց հարազատների և օտարների ներկայությամբ, ինչպես նաև ծնողների և զավակների միջև՝ դարձյալ տարեց հարազատների և օտարների ներկայությամբ:

Խ. Սամուելյանը գտնում է, որ չխոսկանությունը, երեսը թողով ծածկված ման գալը մայրական իրավունքի և հայրիշխանության բախման արդյունք են. մայրական իրավունքի ժամանակ բոլոր կանայք պատկանում էին բոլոր տղամարդկանց, իսկ հայրիշխանության ժամանակ այլևս չէր գործում այդ համակարգը, և խիստ շեշտվում էր հարսի անարատ լինելու գաղափարը: Ուստի չխոսելով, երեսը ծածկած ման գալով՝ նա իր վրա ուշադրություն չէր հրավիրում և բացառում էր ֆիզիկական որևէ մեթոդներ, իսկ տղամարդու կոպտությունը կնոջ նկատմամբ, նրա հետ չխոսելը բացատրվում էին այն հանգամանքով, որ ամուսինը ցանկանում էր ընդգծել այն, որ բոլոր տղամարդկանց իրավունքները նա վերցրել է իր վրա՝ նրանց զրկելով այդ կնոջից, և միայն ինքն է այդ կնոջ տերը: Երեխաների նկատմամբ ծնողների ստոնությունը Խ. Սամուելյանը կապում է դարձյալ մայրիշխանության հետ, երբ չգիտեին երեխաների հորը, չկար նրանց կողմից առանձնակի սեր և հոգատարություն, ուստի տղամարդկանց այս վարքագիծը ժառանգաբար անցել է նահապետական ընտանիքի՞: Չխոսկանությունը, ոտքեր լվանալը, հագուստները հանելիս օգնելը համարվում էին հարգանքի նշան: Դա, հավանաբար, անհրաժեշտ ժամանակաշրջան է եղել (մինչև նորահարսի ծննդաբերությունը) ամուսնու ընտանիքին արյունակից ամուսնու դառնալու համար¹⁷: Ստ. Լիսիցյանն այդ երևույթը կապում է ամոթի զգացման հետ¹⁸: Չխոսկանությունը որպես հարգանքի նշան է բացատրում նաև հարցի լավագիտակ ուսումնասիրող Բ. Բզաժնոկովը: Նա նշում է, որ այն հարցին, թե ինչ է խուսափման սովորույթը, բանասացները պատասխանել են, որ «այդպես էր սովորույթը, որովհետև հարգում էին միմյանց», «որովհետև մեր մեջ նամուս կար»: Ավելի ուշ, երբ արդեն չէին հետևում այդ սովորույթին, և ոչ էլ կար այդպիսի ցանկություն, մեկնաբանում էին այսպես. «Նախկինում դրան նայում էին որպես փոխադարձ հարգանքի դրսևորում, դաստիարակություն»: Այսինքն՝ բանասացների հաղորդածից երևում է, որ խուսափման սովորույթը հանդես էր գալիս որպես վարքի սովորական ձև և ոչ թե ծանր պարտականություն կամ նվաստացուցիչ հանգամանք¹⁹: Վերջինիս հետ շոշափվում են նաև ծնողների և զավակների, ամուսինների, կնոջ և ամուսնու հարազատների փոխհարաբերությունների սահմանափակումների խնդիրները²⁰:

Աղձնիքահայոց մեջ կինն ընտանիքի հպարտությունն էր և պատիվը, նման վերաբերմունքը պարտավորեցնում էր կնոջը պահպանել խստագույն պահպանությանը նորմեր: Մինչև բազմազավակ մայր դառնալը կաշկանդված էր, որից հետո միայն ազատ էր դառնում և վայելում գերդաստանի ազատ հարաբերություններն ու հարգանքը: Երիտասարդ կանանց մասին սովորաբար ասվում էր. «Կնիկը կտորուկ ազգ է», «Կնիկմարդ ձեռաշոր է», «Կնիկմարդ պետք է փակ լինի, իրավունք չունի օտար կամ դրացի մարդու թև ընկնի», «Ամուսինը կնոջ թագավորն է», «Տղամարդ որ կա՝ գլուխ է, կնիկ որ կա՝ ոտ է» և այլն²¹: Կինը

¹⁷ Տե՛ս Խ. Սամուելյան, Մայրական իրավունք. «Ազգագրական հանդես», գիրք 18, Թիֆլիս, 1908, էջ 72-73:

¹⁸ Տե՛ս Վ. Թեմուրջյան, Գամիրք. «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 1, 1970, էջ 113:

¹⁹ Ստ. Լիսիցյան, Ջանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 219:

²⁰ Տե՛ս Գ. Բջաժնոկով, О значении этической позиции ученого в этнографическом исследовании. «Советская этнография», 1979, № № 1, էջ 57-58: Հեղինակը գրում է. «Պետք է նկատել, որ արխագուրու հետամնացությունը թույլ չի տալիս խուսափման այդ սովորույթը դիտել որպես նվաստացուցիչ հանգամանք»: Հմմտ. Я. Смирнова, Семья и семейный быт. Культура и быт народов Северного Кавказа, 1917-1967 гг., М., 1968, էջ 188:

²¹ Տե՛ս А. Е. Тер-Саркисянц (Панян), Обычай избегания у армян и его изживание за годы советской власти (по материалам сельских районов Армянской ССР). ՊԲՀ, 1968, 2, էջ 211-218: Նույնի՝ Современная семья у армян, М., 1998, էջ 91-97: Ա. Սարգսյան, Կանանց վերաբերող ավանդական արգելանքները հայոց մեջ (պատմագագրական ուսումնասիրություն), Կ. Գ. Ք. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր (ձեռագրի իրավունքով), Եր., 2002:

²² ԴԱՆ, տ. 3, էջ 47, տ. 4, էջ 37, 107, տ. 9, էջ 33, 41:

եմթակա էր ճնշման սկետրոջ, ավագ տեգերկանանց և իր ամուսնու կողմից: Նրա կամքը տնօրինում էր սկետուրը, այս կամ այն թերացումը կամ սխալ արարքը հայտնում իր որդուն, իսկ ամուսնու խրատելու միջոցը ծեծն էր: Կինը պարտավոր էր լինել ամուսնուն հավատարիմ, եմթակա նրա ծնողներին ու մերձավորներին, անտրտունջ կատարել իր վրա դրված պարտականությունները: Կնոջն անհավատարմության մեջ կասկածելիս հաճախ դատաստանը թողնվում էր նրա եղբորը: Կինը խոսքի մեջ անազատ էր: Ընդհանրապես մեծ տարբերություններ կային մոր և կնոջ նկատմամբ տղամարդկանց վերաբերմունքի միջև: Մորն անասհման սիրում ու հարգում էին, հավատում ու լսում նրա յուրաքանչյուր խոսքը: Պատահական չէր ասվում, թե «Մոր սուտը կանցնի, բայց կնոջ ճիշտը չի անցնի»²¹: Մայրը սնող-մեծացնողն էր, սրբություն որդու համար, մոր խոսքը բոլորի համար ընդունելի էր «հալած յուղի մման»²⁴, իսկ կինը օտարի աղջիկ էր:

Ընտանիքում և հասարակության մեջ առանձնապես պատիվ չունեին ամուլ կինը: Նրան նայում էին իբրև անպտուղ ծառի, *չոր կոճի*, որպիսին իրեն պարտավորված էր համարում տղամարդկանց հավասար ծանր ու դժվարին աշխատանքներ կատարել, որի համար արժանանում էր նաև կարեկցանքի ու խղճահարության: Մինչդեռ, որքան շատ արու զավակներ ունենար կինը, այնքան կշիռ ու իրավասություն էր ստանում ընտանիքում և հասարակության մեջ: «Ես տասը տղամարդու մայր եմ»²⁵, - լսվում էր շատ անգամ նրանից: Բազմազավակ այդպիսի կանանց գլխաշորը դիտվում էր իբրև սրբություն, տվյալ ընտանիքի պատիվը: Նրա միջոցով հաճախ հաշտեցնում էին կոպող կողմերին: Այդ կանանց խոսքը խրախուսում, սխրագործության էր մղում տղամարդկանց. «Գընճա խոսքը կետին չընճո՞ւր»²⁶, այսինքն՝ կնոջ խոսքն անհետևանք չեն թողնի:

Ընտանեկան վարվելակարգի մեջ, ինչպես նշվեց վերը, առանձնանում են նաև ծնողների ու երեխաների և ամուսնական զույգերի միջև գոյություն ունեցած որոշակի սահմանափակումները: Ըստ այդ նորմերի՝ ծնողները փաստորեն զրկված էին իրենց զավակներին սիրելու և գուրգուրելու իրավունքից: Չափազանց մեծ վիրավորանք ու անարգանք էր համարվում մեծերի կամ օտար մարդկանց ներկայությամբ զրկել, շոյել կամ համբուրել երեխային: Երբ հայրը, երեխային գիրկն առած, նստած էր, և այդ պահին ներս էր մտնում տան մեծը, նա իրեն զգում էր հանցանքի մեջ բռնվածի դերում: Բարոյադաստիարակչական տեսակետից գերդաստանի տղամարդիկ խուսափում էին իրենց կանանց հետ ցերեկը շփվելուց, նրանց միջև առանձին խոսակցություն տեղի չէր ունենում: Կնոջը հայհույնն ու երբեմն ծեծելն ամուսնու համար «տղամարդություն ու քաջություն» էին համարվում: Նա երբեք չէր խորհրդակցում կնոջ հետ, տոներին ամոթ էր համարվում շնորհավորել, մի բան նվիրել նրան: Երիտասարդ կինը գերդաստանում մի առանձին հարգանք չէր վայելում:

Ընտանիքի տարբեր անդամների միջև հարաբերությունները պայմանավորված էին գոյություն ունեցող ավանդական նորմերով: Ըստ այդ սովորույթի՝ տաբուսացված էր գերդաստանի տարեց անդամների, ամուսինների անուններ տալը: Բավականին ակտիվ էին գործում խուսափման սովորույթի դրսևորումներն ամուսինների հարաբերություններում: Դա հասնում էր այն աստիճանի, որ ամուսիններն ուրիշների ներկայությամբ ոչ միայն չէին խոսում իրար հետ, այլև չէին տալիս միմյանց անունները: Յուրաքանչյուր կոնկրետ միջավայրում ձևավորվել էր արտահայտման որոշակի ձև: Հարգի էր կնոջը ոչ թե անձնանվամբ, այլ նրա ծննդավայրի կամ ծնողների անունով դիմելը (Գալիկոսյան աղջիկ, Ստեփոյի աղջիկ կամ՝ այսինչի մայր): Կնոջ ծնողների հետ գրուցելիս ասում էր՝ աղջիկդ, իր ծնողների հետ՝ «հարսը, նշանածը»: Հարսները սովորաբար իրենց ամուսիններից մինչև երեխա ունենալը դիմում էին նրանց փոքր եղբոր, ասենք՝ *Մարգոսի ախպեր*, այդպիսին չլինելու դեպքում՝ եղբոր որդու՝ *Գևորգի ապր*, իսկ երեխա ունենալուց հետո՝ իրենց

²¹ ԴԱՆ, տ. 3, էջ 38-39, տ. 4, էջ 104, տ. 9, էջ 33:

²² ԴԱՆ, տ. 3, էջ 38-39, տ. 4, էջ 37, 106, տ. 8, էջ 86, տ. 9, էջ 30:

²³ «Մշակ», 1879, 34: Եթե կանայք իրենց գլխաշորերը փոփոխ կոպողների ճանապարհին, այն տրորելը սրբապղծություն էր համարվում և կոպիմ վերջ էր տրվում (տե՛ս ԴԱՆ, տ. 4, էջ 38, 106-108):

²⁴ ԴԱՆ, տ. 3, էջ 48, տ. 9, էջ 34:

փոքր որդու՝ *Գագոյի հեր* ձևերով: Սովորույթի համաձայն՝ ուրիշների ներկայությամբ ամուսինը կնոջ հանդեպ պակաս հարգանք պետք է ցույց տար մյուս հարսների համեմատությամբ: Կինն էլ նույնպես, ավելի հարգանք էր ցույց տալիս տեգրերին, քան իր ամուսնուն: Բանը հասնում էր նրան, որ ամուսնու պանդխտության գնալու ժամանակ կամ մահվան դեպքում կինը չպետք է բարձր ձայնով լաց լիներ. դա մեծ ամոթ էր համարվում: Նորահարսը իրավունք չուներ իր ամուսնու հագուստը լվանալու, ամուսնու համար սեղան գցելու: Պարտավոր էր լվանալ բոլոր տեգրերի ոտքերը, բայց ոչ իր ամուսնունը:

Տարեց կանայք էլ իրենց ամուսիններին դիմում էին «տո մարթ, այ մարթ» ձևով: Գերդաստանում իրար դիմելիս գրեթե բոլորն էլ խուսափում էին արտասանել անունները՝ նրանց կյանքը հոգևոր պաշտպանության տակ դնելու նպատակով: Ծնողները երեխաներին դիմում էին՝ *տղա լաօ, աղջի լաօ*, երեխաները ծնողներին՝ *բաբ, մամ, դայե, նանե*, իսկ պապին ու տատին՝ *ջոբո, ջոբո* հորջորջումներով: Տեգրերն ու տեգրկանայք մեկմեկու դիմում էին երեխաների անունների միջնորդմամբ (Դավթի բաբ, Գորքեի մամ)²⁷:

Տղամարդու և կնոջ միջև խուսափման սովորույթով էր պայմանավորված բնակարանային համալիրի՝ մեծ տան (թոնրատուն, խորընդուն, կենալատուն) բաժանված լինելը կանանց և տղամարդկանց հարկաբաժինների. վերին կամ փոքր տունը կանանց բաժինն էր, ներքին տունը՝ տղամարդկանց:

Ինչ-որ չափով արգելանք է նկատվում ճաշելիս գերդաստանի անդամներին ըստ սեռի ու տարիքի խմբերի բաժանելու երևույթի մեջ: Այսպես, օրինակ, տղամարդիկ սեղան էին նստում առանձին, կանայք՝ առանձին՝ ավագության կարգով, ծալապատիկ, թաղիքների վրա: Սեղանի փոխարեն փոռոցն էր, որի վրա գցվում էր *հացշորքը*: Հասակավոր մարդկանց կողքերին և թիկունքին դրվում էին հենաբարձեր: Տղամարդիկ ճաշի էին նստում գլխատանը՝ թոնրի կամ թվեքի շուրջը կամ օդայում, որից հետո կանայք՝ գլխատան վերին մասում՝ գլուխները խոնարհած, առանձնապես ջահել հարսները, որ աննկատ մնան: Նորահարսը մինչև երեխա ունենալը ճաշում էր ջահել աղջիկների հետ առանձին խմբով: Փոքր տարիքի երեխաները ճաշի էին նստում իրենց մայրերի, իսկ պատանիները՝ տղամարդկանց հետ: Տղամարդիկ և կանայք նստում էին սեղանի շուրջը բոլորաձև: Նախ ճաշում էին տղամարդիկ, հետո՝ կանայք երեխաների հետ, այնուհետև՝ երիտասարդ հարսներն ու աղջիկները, որոնք նաև մատուցողներն էին: Հյուրեր հայտնվելիս մատուցողները դառնում էին ջահել տղաները:

Ի տարբերություն այս ամենի՝ փոքր ընտանիքում կար ճաշելու երկու կարգ. ա) համեմատաբար առաջադեմ ընտանիքում միևնույն սեղանի շուրջն էին նստում տան բոլոր անդամները, բ) գերդաստանական հարաբերություններ պահպանած ընտանիքներում ճաշում էին տղամարդիկ առանձին, կանայք, հարսներն ու երեխաները՝ համատեղ²⁸: Կանանց անիրավահավասարության և խուսափման դրսևորումներից մեկն էլ այն էր, որ կանայք ճաշում էին տղամարդկանցից հետո, և երկրորդ՝ ընտիր կերակուրով նախ պահովում էին տղամարդկանց, որոնք կատարում էին դրսի դժվարին աշխատանքները, ավելանալու դեպքում՝ երեխաներին և կանանց: Կերակուր եփելը կնոջ գործն էր, տղամարդկանց արգելվում էր թոնրատուն մտնել ու կանանց գործերին խառնվել, իսկ կնոջն էլ արգելվում էր խորոված անելը, այլպես միսը համարվում էր հարամ: Հետաքրքիր է, որ այս արգելքի դրսևորումներից մեկն էլ կնոջ կողմից անասուն մորթելու արգելքն է, որ խստորեն կիրառվում էր Հայաստանի բոլոր պատմագագարական մարզերում: Սասունում կանայք անասուն, մույնիսկ հավ չէին մորթում, թեկուզ դրանք սատկեին: Որպեսզի կենդանին չսատկեր, և միսը չփշանար, կանայք դանակը տալիս էին մի տղայի ձեռքը, և իրենք էլ, այդ ձեռքն ու դանակը բռնած, մորթում էին կենդանուն: Մորթելիս

²⁷ Տե՛ս ԴԱՆ, տ. 3, էջ 58-59, տ. 4, էջ 25, 38, 59, տ. 8, էջ 96, տ. 9, էջ 42: Համանման սովորույթները բնորոշ էին նաև հյուսիսկովկասյան ժողովուրդներին (տե՛ս Մ. Օ. Косвен, Этнография и история Кавказа, М., 1961, էջ 136: Հմտ. А. Байбурин, А. Топарков, У истоков этикета, Ленинград, 1990, էջ 101):

²⁸ ԴԱՆ, տ. 9, էջ 34-36:

տվյալ դեպքում դեր խաղացողը կնոջ ուժն էր: Տղայի ձեռքը լոկ ձևականություն էր²⁹: Ըստ երևույթին կնոջ մորթ անելու արգելքը պայմանավորված է եղել նրա արգասավորությանը. որպես մայր՝ նա չէր կարող արյուն հեղել: Կնոջը չէր թույլատրվում նաև ցանքս անել: Սերմնացան էր դառնում միայն հասակավոր, մի քանի զավակների տեր տղամարդը: Այստեղ, ինչ խոսք, գործում է աշխատանքի բաժանման սեռատարիքային կարգը: Բայց, չնայած ցանքս անելու արգելքին, ուշագրավ է, որ երբ երաշտ էր լինում, արդեն զխսավոր դերը պատկանում էր կանանց, որոնք զանազան հմայական գործողություններով փորձում էին անձրև բերել: Ուշագրավ է, որ մի դեպքում կնոջն արգելվում էր ցանքս անել, նաև ծառ տնկել, գինու ստացման համար խաղողը ճմռել: Մի այլ դեպքում նրանք էին հիմնականում մտահոգվում բնության արհավիրքներից պաշտպանվելու հարցերով: Այս երևույթը դարձյալ աղերսվում էր պտղաբերության գաղափարի հետ, և կանայք, որպես դրա կրողներ, ավելի շատ էին մտահոգվում բերքի պահպանման ու հասունացման համար և դիմում էին զանազան հմայական հմարների: Որոշակի արգելքներ էին սահմանվում հղի կամ դաշտանի մեջ գտնվող կնոջ նկատմամբ: Նրան արգելվում էր խմոր հունցել, հաց թխել, խնոցի հարել, ծանր գործեր անել՝ «հարամ» լինելու պատճառով: Նմանատիպ արգելքներն էլ միտում ունեին պահպանելու արյուն կորցրած կնոջ առողջությունը: Երիտասարդ աղջիկներին, հատկապես հղի կանանց, արգելվում էր կենդանու փայծաղ ուտել նորածնի մարմինը չսևանալու մտավախությամբ: Կանանց նկատմամբ արգելքներ էր կիրառվում թաղումների ժամանակ: Կանայք ննջեցյալին ուղեկցում էին մինչև եկեղեցի կամ գերեզմանոցի սահմանի հանգստյան քարը, բայց ոչ՝ գերեզմանոց:

Ամփոփման կարգով ասենք՝ սկզբնական շրջանում խուսափումը հավասարապես վերաբերել է ամուսիններին, սակայն ժամանակի ընթացքում նահապետական ընտանիքի ավանդույթների ազդեցությամբ այն հիմնականում ընկնում էր կնոջ ուսերին: Ամուսնու խուսափումը տևել է շատ կարճ, դրսևորվել է հիմնականում հարսանեկան որոշ ծեսերում: Միմչդեռ նորահարսը, ոտք դնելով ամուսնու օջախ, պարտավոր էր պահպանել այդ սովորույթն ընտանիքի՝ իրենից տարիքով բարձր բոլոր անդամների նկատմամբ: Վերաբերումը կնոջ նկատմամբ, նրա դերը, ազատության աստիճանը փոխվում էին տարիքի հետ կապված և համապատասխանում էին նրա սոցիալական կարգավիճակի փոփոխությանը: Կնոջ կյանքի ընթացքում համեմատաբար ազատություն էր տրվում նրան նախքան ամուսնանալը, որն արտահայտվում էր նաև ազատ տարիքային տեղափոխությամբ: Դրանից հետո գալիս էր առավել սահմանափակվածության, գրեթե «անշարժության» փուլը, որն սկսվում էր նշանադրությունից հետո: Այդ արարողությունից սկսած՝ առաջանում էր արգելքների յուրահատուկ համակարգ, որը կիրառվում էր կանանց նկատմամբ: Որքան կինը երիտասարդ էր, նույնքան խիստ էին նրա նկատմամբ կիրառվող արգելքները, և, ընդհակառակը, որքան նա տարեց էր, այնքան արագ թուլանում էին այդ արգելակումները: Միայն տարիների ընթացքում զավակների տեր կինը աստիճանաբար ձեռք էր բերում որոշ ազատություն և հասարակության անդամ դառնում: Բազմազավակ կինը, հատկապես հարսների, թոռների տեր տարեց կինը, մեծ հարգանքի էր արժանանում: Ի տարբերություն Աղձնիքի հովտային շրջանների հայ բնակչության սովորույթների՝ լեռնական սասունցի կանայք սակավ էին ենթարկված սահմանափակումների: Նրանք աչքի էին ընկնում նաև խիզախությամբ, երբեմն զինված մարտնչում էին հրոսակների դեմ ամուսինների, համայնքի տղամարդկանց հետ:

Խուսափման սովորույթը հիմնականում դրսևորվել է վարքագծային սահմանափակումներով և չխոսկանությամբ: Սովորույթների այս համակարգը սկսում է աստիճանաբար վերանալ՝ կապված սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային վերափոխումների հետևանքով գերդաստանական ավանդույթների թուլացման, փոքր ընտանիքների տարածման, ընտանիքում և հասարակության մեջ կնոջ դերի բարձրացման հետ:

²⁹ Տե՛ս Վ. Պետոյան, Սասնա ազգագրությունը, Եր., 1965, էջ 115:

Р. А. НААПЕТЯН - Проявления традиции уклонения в семейном быту армян Ахдзника. - В рамках данной статьи делается попытка на основании полевых этнографических материалов представить систему используемых запретов по отношению к женщинам в быту патриархальной армянской ахдзникской семьи. Эта система является следствием родовых традиций. Запреты, относящиеся к семейному быту, были обусловлены канонами бытовых нравственно-правовых норм, регулирующих взаимоотношения между членами семьи. В течение веков в многочисленной родовой семье возникла и сформировалась регулирующая взаимоотношения между членами семьи система норм, которая часто проявлялась в виде определенных запретов. Применяющиеся в семейном быту запреты по-своему регулировали отношения между мужчинами и женщинами, их характер непосредственно был связан со структурой рода, разделением работ по половому признаку и т.д.

Традиции уклонения в основном проявлялись в поведенческих ограничениях и молчании. Эта система обычаев постепенно исчезает, что обусловлено ослаблением родовых традиций, увеличением количества малочисленных семей и возрастанием роли женщины в семье и обществе.